## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դեբետ համայնք , գ.Դեբետ , 6 - 8 0 - 55

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 31 >> մայիսի 20 17 թվականի N 7 – Ա

### ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017թ. ՄԱՅԻՍԻ 31 -Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի դրույթներով Դեբետ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Դեբետ համայնքի ավագանու 2017թ.-ի մայիսի 31-ի նիստի օրակարգը:

Օրակարգ

1.Դեբետ համայնքի 2017 թվականի փոփոխված բյուջեն հաստատելու մասին:

2. ՀՀ Լոռու մարզի Դեբետ համայնքի <<Արնիկ>> մանկապարտեզ ՀՈԱԿ-ի վերանորոգման աշխատանքներին աջակցելու նպատակով համայնքի ֆոնդային բյուջեից գումար հատկացնելու մասին:

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դեբետ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին:

4.Հանձնաժողով կազմելու մասին:

5.Սոցիալապես անապահով ընտանիքին դրամական օգնություն տալու մասին:

Կողմ / 4/ Դեմ /0/ Ձեռնպահ/0/

Դավիթ Նազլուխանյան

Նաիրա հարությունյան

Զավեն Խաչատրյան

Աշոտ Ղազարյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՐԱՏ ՔՈՉԱՐՅԱՆ

20 17 թ. ________________ _____

գ. ______________

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դեբետ համայնք , գ.Դեբետ , 6 - 8 0 - 55

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 31 >> մայիսի 20 17 թվականի N 8 – Ն

ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓՈՓՈԽՎԱԾ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ մասով համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Դեբետ համայնքի 2017 թվականի փոփոխված բյուջեն:

Կողմ / 4/ Դեմ /0/ Ձեռնպահ/0/

Դավիթ Նազլուխանյան

Նաիրա հարությունյան

Զավեն Խաչատրյան

Աշոտ Ղազարյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՐԱՏ ՔՈՉԱՐՅԱՆ

20 17 թ. ________________ ____

գ. ______________

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դեբետ համայնք , գ.Դեբետ , 6 - 8 0 - 55

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 31 >> մայիսի 20 17 թվականի N 9 – Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԱՐԵՎԻԿ>> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ԱՋԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 18-րդ հոդվածի դրույթներով Դեբետ համայնքի ավագանին
որոշում է՝

Համաձայնություն տալ Դեբետ համայնքի <<Արևիկ>> մանկապարտեզ ՀՈԱԿ-ի վերանորոգման աշխատանքներին աջակցելու նպատակով համայնքի ֆոնդային բյուջեից 950 000 /ինը հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ գումար հատկացնելուն:

Կողմ / 4/ Դեմ /0/ Ձեռնպահ/0/

Դավիթ Նազլուխանյան

Նաիրա հարությունյան

Զավեն Խաչատրյան

Աշոտ Ղազարյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՐԱՏ ՔՈՉԱՐՅԱՆ

20 17 թ. ________________ ____
գ. ______________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դեբետ համայնք, գ.Դեբետ, 6 - 8 0 - 55

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 31 >> մայիսի 20 17 թվականի N 10 – Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասին, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին համապատասխան՝ Դեբետ համայնքի ավագանին

**որոշում է.**

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դեբետ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Դեբետ համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 24 -ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Դեբետ համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» N 33-Ա որոշումը:
3. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումը ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ավագանու հաստատմանը ներկայացնել որոշումից բխող «Դեբետ համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» համայնքի ավագանու որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ավագանու որոշման նախագիծը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի մայիսի 31 --ից:

Կողմ / 4/ Դեմ /0/ Ձեռնպահ/0/

Դավիթ Նազլուխանյան

Նաիրա հարությունյան

Զավեն Խաչատրյան

Աշոտ Ղազարյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՐԱՏ ՔՈՉԱՐՅԱՆ

*07300514*

20 17 թ. ________________ ____
գ. ______________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դեբետ համայնք , գ.Դեբետ , 6 - 8 0 - 55

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 31 >> մայիսի 20 17 թվականի N 11 – Ա

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝ Դեբետ համայնքի ավագանին

**որոշում է.**

1.Համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկելու նպատակով կազմել մշտական գործող հանձնաժողով հետևյալ կազմով՝

1, Նարեկ Պողոսյան համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար, հանձնաժողովի նախագահ,
2.Կարինե Նազլուխանյան համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ հանձնաժողովի նախագահի տեղակալ,
3.Նաիրա Հարությունյան ավագանու անդամ, հանձնաժողովի քարտուղար,
4.Դավիթ Նազլուխանյան ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),
5.Զավեն Խաչատրյան ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),
6.Արայիկ Սարգսյան համայնքի բնակիչ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),
7.Վահան Հարությունյան համայնքի բնակիչ հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ):

2. Հանձնաժողովին՝ ստացված դիմումները քննարկել դրանք համայնքապետարանի աշխատակազմ մուտքագրվելուց հետո 7–օրյա ժամկետում և հանձնաժողովի եզրակացությունը՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցի հատկացման չափի և անհրաժեշտության մասին ներկայացնել համայնքի ղեկավարին:

Կողմ / 4/ Դեմ /0/ Ձեռնպահ/0/

Դավիթ Նազլուխանյան

Նաիրա հարությունյան

Զավեն Խաչատրյան

Աշոտ Ղազարյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՐԱՏ ՔՈՉԱՐՅԱՆ

20 17 թ. ________________ _____

գ. ______________

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դեբետ համայնք, գ.Դեբետ, 6 - 8 0 - 55

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 31 >> մայիսի 20 17 թվականի N 12 – Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 31 -ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դեբետ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 10---Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Դեբետ համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակչի դիմումը և համայնքի բյուջեից նրա ընտանիքին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարը տրամադրել բնակչին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ / 4/ Դեմ /0/ Ձեռնպահ/0/

Դավիթ Նազլուխանյան

Նաիրա հարությունյան

Զավեն Խաչատրյան

Աշոտ Ղազարյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՐԱՏ ՔՈՉԱՐՅԱՆ

20 17 թ. ________________ _____
գ. ______________